ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

25.05.2011թ. ք.Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 97 անդամներից 95-ը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Ս. Հովհաննիսյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

Մարզխորհրդի նիստը վարում էր ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ Ս. Մինասյանը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Մարզի համայնքների 2011թ. չորս ամիսների բյուջեների կատարման մասին:
   / Զեկ.՝ ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյան/

2. Մարզի համայնքներում 2010թ. ընթացքում և 2011թ. 1-ին եռամսյակում "Աղետների և ծառայությունների մասին" ՀՀ օրենքի պահանջների կատարման ուսումնասիրությունների արդյունքների մասին:
   / Զեկ.՝ զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Հակոբյան /

3. Սանիտարական վիճակի և համայնքներում աղբահանության աշխատանքների կազմակերպման մասին:
   / Զեկ.՝ քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ե. Հակոբյան/

4. Ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակը մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում:
   /Զեկ.՝ կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Հակոբյան/

Այլ Հարցեր՝

- Արարատի մարզի դատախազի 30.03 .2011թ. N - Մն- 1/31-11 միջնորդագրի քննարկում:

/Իրավաբանական բաժնի վարիչ Վ. Գրիգորյան/

Հայտարարություն

/Իրավաբանական բաժնի վարիչ Վ. Գրիգորյան/

1. ***Լսեցին՝***

Մարզի համայնքների 2011թ. չորս ամիսների բյուջեների կատարման մասին ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

/ կցվում է /

Արտահայտվեց՝

Արարատի մարզպետի տեղակալ Ս. Մինասյանը:

Առաջարկվեց

վարձավճարների և հողի հարկերի մասով՝ 5 ամսվա կտրվածքով, բյուջեն չկատարած կամ թերի կատարած համայնքների ղեկավարներին՝ բացթողումները հասցնել նվազագույնի:

2. ***Լսեցին՝***

Մարզի համայնքներում 2010թ. ընթացքում և 2011թ. 1-ին եռամսյակում "Առևտրի և ծառայությունների մասին" ՀՀ օրենքի պահանջների կատարման ուսումնասիրությունների արդյունքների մասին զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Հակոբյանի զեկուցումը:

/ կցվում է /

Արտահայտվեցին՝

Արարատի մարզպետի տեղակալ Ս. Մինասյանը, Մխչյան համայնքի ղեկավար Ա. Իսաջանյանը:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

2.1 Հսկողություն իրականացնել համայնքի տարածքում հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում՝ "Վարչական իրավախախտումների վերաբերյալ" օրենքի պահանջներին համապատասխան:

2.2 Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը, հսկողության արդյունքների վերաբերյալ եռամսյակային հաշվետվություն ներկայացնել մարզպետարան:

2.3 Ժամանակին և ամբողջությամբ հաշվառել արտաքին գովազդը և տալ համապատասխան թույլտվություններ:

3. ***Լսեցին՝***

Սանիտարական վիճակի և համայնքներում աղբահանության աշխատանքների կազմակերպման մասին քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ե. Հակոբյանի զեկուցումը:

/ կցվում է /

Արտահայտվեցին՝

Արարատի մարզպետի տեղակալ Ս. Մինասյանը, Այգեստան համայնքի ղեկավար Ս. Հովսեփյանը:

Առաջարկվեց՝

3.1 համայնքի ղեկավարներին՝

առավել հետևողական լինել համայնքներում տարածքների սանիտարական վիճակի հետ կապված ձեռնարկվող միջոցառումների իրականացման նկատմամբ:

3.2 ՀՀՀԿ Արարատի մարզային կենտրոնին՝

առավել արդյունավետ դարձնել մարզի տարածքի ասանիտարահիգիենիկ վիճակի հետ կապված աշխատանքների նկատմամբ իրականացվող վերահսկողությունը:

4. *Լսեցին՝*

Մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին մշակույթի և սպորտի բաժնի պետ Մ. Կարապետյանի զեկուցումը:

/ կցվում է /

Արտահայտվեցին՝

Արարատի մարզպետի տեղակալ Ս. Մինասյանը, Վեդու քաղաքապետ Վ. Բարսեղյանը:

Այլ հարցեր՝

- Իրավաբանական բաժնի պետ Վ. Գրիգորյանը քննարկման ներկայացրեց Արարատի մարզի դատախազի 30.03 .2011թ. N - Մն- 1/31-11 միջնորդագիրը:

Հայտարարություն՝

- Հայտարարությամբ հանդես եկավ իրավաբանական բաժնի պետ Վ. Գրիգորյանը՝

մինչև 40 տարեկան պայմանագրային զինծառայության անցնելու ցանկացող քաղաքացիները դիմեն ք. Արարատի "Վազգեն Սարգսյանի" անվան զորամաս:

Մարզխորհրդի նիստը ամփոփեց մարզպետի տեղակալ Ս. Մինասյանը:

ՄԱՐԶՊԵՏ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ